ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 18 >> 08 2012 թվական N 122 քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1]-րդ և 77[2]-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի հունվարի 30-ի «Վարչական հսկողության 2012 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 11-Ա հրամանը

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Լիպարիտ Մարտիրոսյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ, խմբի ղեկավար

Սուրեն Ավետիսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ

Հուրիկ Մարտիրոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ

Գագիկ Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Լյովա Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ

Արմեն Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ

Վանիկ Սերոբյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջին կարգի մասնագետ

2. Աշխատանքային խմբին՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատի համայնքում 5 աշխատանքային օրվա ընթացքում, 2009 թվականի հուլիսի 1-ից մինչև 2012 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակաշրջանի համար իրականացնել վարչական հսկողություն (ժամկետ՝ 2012 թվականի սեպտեմբերի 3-ից մինչև 2012 թվականի սեպտեմբերի 7-ը):

2) 5 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել արդյունքները և սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ԳԻԶԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է